

**ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ
ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱԼՖՐԷՏ ԵՒ ՄԱՐԿՐԻԹ ՅՈՎԱԷՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ**

Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ Ալֆրէտ եւ Մարկրիթ Յովսէփեան Վարժարանի Մանկապարտէզի, Նախակրթարանի եւ Միջնակարգի ամալերջի հանդէսը տեղի ունեցաւ Շաբաթ, Յունիս 26ի երեկոյեան ժամը 5:00ին, Փասատինայի ՀԲԸՄ Մշակութային Կեդրոնին մէջ:

Շրջանաւարտները թափօրով մուտք գործեցին սրահէն ներս: Բացման աղօթքը կատարեց Առաջնորդ Սրբազան Հայրը, որուն յաջորդեց քայլերգներուն կատարումը շրջանաւարտներու կողմէ: Բացման խօսքը կատարուեցաւ Ե. Կարգի կողմէ: Նոյնպէս անոնք արտասանեցին Աւետիք Իսահակեանին «Կտակ»ը: Դաստիարակի խօսքով հանդէս եկաւ Տիկին Ք. Ղազարեան, որուն յաջորդեց Ե. Կարգի վկայականներուն եւ մրցանակներուն բաշխումը:

«Հրաժեշտի Երգ»ը, հայկական պարը եւ հրաժեշտի խօսքը կատարեցին Մանկապարտէզի ուսանողները: Ապա կատարուեցաւ վկայականներու բաշխում:

Հրաժեշտի խօսքը եւ Անդրանիկ Ծառուկեանի «Փառաբանութիւն Հայ Լեզուի»ին կատարուեցաւ Ը. Կարգի կողմէ, ապա տեղի ունեցաւ վկայականներուն եւ մրցանակներուն բաշխում:

Վարժարանի Հոգաբարձութեան խօսքը փոխանցեց Յարութիւն Հիլալեան, ապա Շահէ Մանկրեան փոխանցեց Տնօրէնութեան խօսքը: Փակման խօսքով հանդէս եկաւ Արժ. Տ. Միքայէլ Քահանայ Կիրեղեան եւ շնորհաւորեց բոլոր շրջանաւարտները եւ մրցանակի արժանացողները: Գնահատեց Վարժարանի Հոգեւոր Տեսուչ՝ Տ. Սարգիս Աւագ Քինյ. Փեթոյեանին լուրջ հետաքրքրութիւնը եւ ծառայութիւնը, ինչպէս նաեւ Պրն. Տնօրէնին, Ուսուցչական կազմին, Հոգաբարձութեան եւ Ծնողա-Ուսուցչական Մարմնին մատուցած նուիրեալ ծառայութիւնները: Օրհնեց բոլորին եւ յարատեւ յաջողութիւն մաղթեց կրթական եւ դաստիարակչական մարզէն ներս: